Համազասպ ԳԱԼՍՏՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու

1989 թ. ավարտել է ԵրԺՏԻ (այժմ՝ ՀՊՏՀ) պլանափնտրեսագիտական ֆակուլտետը: 1980-1982 թթ. ծառայել է խորհրդային զինված ուժերում: 2004 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2004-2019 թթ. դասավանդել է ՀՀ կառավարման ակադեմիայում, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայում և Տուրիզմի հայկական ինստիտուտում:

2019 թվականից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող է:

Հեղինակ է մեկ տասնյակ գիտական հոդվածների և մենագրության:

ՃԱՊՈՆԱԿԱՆ ԽՃԱՆԿԱՐ. ՊԱՏԵՐԱԶՄ, ԱՏՈՄԱՅԻՆ ԱՂԵՏ, ԿԱՊԻՏՈՒԼՅԱՑԻԱ, ՕԿՈՒՊԱՑՈՒՄ, ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԵԼՔ

DOI: 10.52174/2579-2989_2021_1_100

Ճապոնիան ունի իր Բուսիդոն, մենք՝ մեր Վահագնը:
Նա արիապաշտ է, մենք՝ էինք:
Նա ցեղապաշտ է, մենք՝ պիտի դառնանք:

Գարեգին Նժդեհ

Հիմնաբառեր. *Ճապոնիա, Երկրորդ համաշխարհային պատերազմ, ատոմային աղետ, SCAP, ձայբացու, կեյրեցու, ավտոմատացում, տնտեսական հրաշք, վերելքի գործոններ*

Երկրորդ համաշխարհային պատերազմը Ճապոնիային՝ որպես ֆաշիստական Գերմանիայի համախոհ զինակցի «մատուցեց» պարտվող երկրին հասանելի արհավիրքների ամբողջական «փաթեթ», որին գումարվեց նաև ատոմային աղետը: Վերջնական կործանումն անխուսափելի էր թվում, սակայն երկիրը ոչ միայն դուրս եկավ անելանելի թվացող իրավիճակից, այլև ընդամենը մի քանի տասնամյակ անց իր տեղը գրավեց աշխարհի առաջատարների շարքում, իսկ ներկայում մի շարք ոլորտներում, մասնավորապես՝ նորարարական տեխնոլոգիաների ներդրման և կիրառականության առումով, թելադրում է համաշխարհային տնտեսական իր օրակարգը՝ նախանշելով զարգացման աներևակայելի բարձր նշաձող:

Հոդվածում, հետահայաց վերլուծությամբ, ներկայացվում է ցավալի պատերազմից, ատոմային աղետից հետո տնտեսության զարգացման զրոյական կետից մեկնարկող երկրի անցած ճանապարհը, որը նախ՝ ի զորու եղավ ընտրելու իր հիմնական գործընկերոջը ու հենց այդ ընտրությամբ նախանշելու երկարաժամկետ զարգացման ուրույն ուղի, ապա կարողացավ վերանայել և վերաիմաստավորել ոչ միայն իր իրավական ու տնտեսական հիմնարար սկզբունքները, այլև իր ժողովրդի հոգևոր-ավանդական և դարերով կերտված ազգային վարքագծային նորմերը, որոնք արդեն, կարծես թե, ենթագիտակցական մակարդակում էին: Թվում է՝ մի քանի տասնամյակում հնարավոր չէ վերաձևել իրերի՝ ասես քարացած դրվածքը, բայց Ճապոնիան կոտրեց բոլոր կարծրատիպերը ու դարձավ տնտեսական հաջողված պատմությունների հիմնական կերտողն ու մարդկության

պատմության առաջընթացի լիիրավ խորհրդանիշն աշխարհում՝ XX դարի երկրորդ կեսին:

Տնտեսական, քաղաքական ու պատմական որոշ փվյալներ:

Հոկայդո, Հոնսյու, Սիկոկու, Կյուսյու և դրանց հարակից՝ մեծ ու փոքր մոտ 3000 կղզիների վրա, որոնք զբաղեցնում են 372 հազ. քառ. կմ հողատարածք, գոյություն ունի Ծագող արևի երկիրը[1], որը XX դարի կեսերին ենթարկվեց անպատմելի ճնշման ու ատոմային աղետի: Ջրերով շրջափակված և մնացյալ աշխարհի հետ ցամաքային հեռահաղորդակցությունից զուրկ, ինչպես նաև աղքատիկ բնական պաշարներով յուրաքանչյուր պետության համար վերը նկարագրվածը կարող էր դառնալ պետական միավորի ոչնչացման և վերացման հիմնավոր ու արդարացնող փաստարկ: Սակայն Ճապոնիան ոչ միայն դուրս եկավ անելանելի թվացող վիճակից, այլև ընդամենը մի քանի տասնամյակ անց դարձավ աշխարհի առաջատար ու զարգացած երկրներից մեկը, իսկ ներկայում մի շարք ոլորտներում, մասնավորապես՝ նորարարական տեխնոլոգիաների ներդրման և կիրառականության առումով, թելադրում է համաշխարհային տնտեսական իր օրակարգը՝ նախանշելով զարգացման աներևակայելի բարձր նշաձող: 1867-1868 թթ. բուրժուական հեղափոխությունը սկիզբ դրեց ճապոնական պատմության մեջ նոր՝ կապիտալիստական դարաշրջանին[2]: Մի քանի տարվա ընթացքում իրականացված բուրժուական բարեփոխումները նախանշեցին այն ուղին, որով զարգանալու էր երկիրը: Համաձայն 1889 թ. սահմանադրության՝ Ճապոնիան հռչակվեց միապետություն, որը ղեկավարում էր կայսրը, սակայն երկրի օրենսդիր իշխանության կառավարման մեջ նրան աջակցում էր խորհրդարանը[3]: XIX և XX դարերի սահմանագծին Ճապոնիան թևակոխեց մենաշնորհային կապիտալիզմի փուլ, որը նաև արագացնում էր իմպերիալիստական տերության վերափոխվելու գործընթացը: Երկրի ընդգծված ռազմականացումը, որն ընդգրկում էր կյանքի տարբեր ոլորտներ ու սոցիալական հարաբերություններ, ինչպես նաև ֆեոդալական մնացուկների կենսունակ վիճակը ճապոնական իմպերիալիզմին հաղորդեցին ռազմաֆեոդալական բնույթ: Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Ճապոնիան ռազմական դաշինք կնքեց նացիստական Գերմանիայի և ֆաշիստական Իտալիայի հետ (1940 թ.) և հետևաբար՝ արդեն 1941 թ.-ին մտավ պատերազմի մեջ՝ ռազմական գործողություններ ծավալելով, նախևառաջ, ԽՍՀՄ-ի, ապա նաև ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի դեմ:

Ֆաշիստական Գերմանիայի պարտությունից և 1945 թ.-ի մայիսյան կապիտուլյացիայից հետո Գերմանիայի համախոհ Ճապոնիայի համար պատերազմն այդպես էլ չավարտվեց: Երկրորդ համաշխարհային պատերազմի վերջին փուլում՝ 1945 թ. օգոստոսին, ԱՄՆ-ի զինված ուժերն ինչպես ռազմաքաղաքական, այնպես էլ ռազմավարական դրդապատճառներից և մարտավարական նպատակահարմարություններից ելնելով, Ճապոնիայի Հերոսիմա (օգոստոսի 6, 1945 թ.) և Նագասակի (օգոստոսի 9, 1945 թ.) քաղաքների վրա իրականացրին ատոմային ռմբակոծություններ, որոնք մինչ օրս մարդկության պատմության մեջ միջուկային զենքի ռազմական կիրառման միակ դեպքերն են:

Միջուկային զենքի հարվածը չորսամյա պատերազմի եզրափակիչ, աղետալի ակորդն էր Ճապոնիայի համար: ԽՍՀՄ-ի և ԱՄՆ-ի ուժերով, ըստ էության, երկիրը

[1] https://hy.wikipedia.org/wiki/%D5%8A%D5%B8%D6%80%D5%BF%D5%A1%D5%AC:%D5%83%D5%A1%D5%BA%D5%B8%D5%B6%D5%AB%D5%A1

[2] Страны мира: краткий полит.-экон. справочник, М., Политиздат, 1989.

[3] Япония. Региональная структура экономики./Под ред. В.Я.Выборнова. М., Наука, 1987.

[4] Դուգլաս ՄաքԱրթուր (1880-1964) - ամերիկացի գեներալ, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ (1939-1945) ղեկավարում էր խաղաղօվկիանոսյան հարավարևմտյան ճակատը: Կորեական պատերազմում (1950-1953) գլխավորել է ՄԱԿ-ի զինված ուժերը:

լիովին ջախջախվեց: Սակայն, հետպատերազմյան Ճապոնիայի ճակատագիրը, ի տարբերություն Գերմանիայի, ոչ թե վերապահվեց հաղթող ուժերից յուրաքանչյուրին՝ ըստ տարածքային օկուպացման սկզբունքի, այլ անցավ ԱՄՆ-ի քաղաքական ու տնտեսական շահերի անմիջական տիրույթ, ինչը 1945 թ. սեպտեմբերի 2-ին ամերիկյան «Միսսուրի» ռազմանավի վրա պաշտոնապես ամրագրվեց ամերիկյան զինված ուժերի գեներալ Դուգլաս ՄաքԱրթուրի[4] կողմից ստորագրված՝ Ճապոնիայի կապիտուլյացիայի ակտով[5]: Հենց Դուգլաս ՄաքԱրթուրին էլ, որպես Ճապոնիայի օկուպացիայի ժամանակաշրջանում Դաշնակից պետությունների գլխավոր հրամանատարության (SCAP)[6] գերագույն ղեկավար, վերապահված էր 1945-1951 թթ.-ին վերահսկել զինված ուժերի զորացրումն ու լուծարումը, երկրի տնտեսության վերականգնմանն ուղղված միջոցառումների ու իրավական բարեփոխմանը միտված նոր սահմանադրության մշակման աշխատանքների համակարգումը: Թեև Մեծ Բրիտանիա, Խորհրդային Միությունը և Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը դաշնակցային խորհրդում օժտված էին խորհրդատվական ձայնի իրավունքով, այդուհանդերձ, Դուգլաս ՄաքԱրթուրը յուրաքանչյուր որոշում ընդունելու գերագույն իրավասությունն ուներ ու այդպես էլ վարվում էր: Հետևապես՝ արդեն փաստացի երկրի վերականգնման ու զարգացման քաղաքականության «հսկիչ ծրարը» ԱՄՆ-ի ձեռքում էր:

SCAP-ի գերիշխանության փարիները Ճապոնիայում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում անցկացվեցին մի քանի համաժողովներ, որոնցում Մեծ Բրիտանիայի, Խորհրդային Միության, Չինաստանի Ժողովրդական Հանրապետության և Միացյալ Նահանգների ղեկավարները քննարկման առարկա դարձրին նաև Ճապոնիայի խնդիրը՝ ապառազմականացման, գաղութների (Կորեա, Թայվան) ճակատագրի, ինչպես նաև տնտեսության հետագա զարգացման առումներով: Այդ քննարկումներում ուրվագծվեց, ապա պատերազմի ավարտից հետո արդեն կյանքի կոչվեց գործողությունների մի ծրագիր, որն իրականացվեց Ճապոնիայի օկուպացիայի տարիներին՝ SCAP-ի գերիշխանությամբ:

Ըստ գործողությունների ժամանակագրության՝ Ճապոնիայի օկուպացումը կարելի է բաժանել երեք հիմնական փուլերի.

- պատժելու և բարեփոխումներ սկսելու ջանքերի ներդրման փուլ,
- տնտեսության «վերակենդանացման» նպատակային աշխատանքների իրականացման փուլ,
- խաղաղության պայմանագրի և դաշինքի կնքման փուլ:

Առաջին փուլը տևեց պատերազմի ավարտից մինչև 1947 թ.-ը: Պետությանը պատժելու համատեքստում, Տոկիոյում, Նյուրենբերգյան դատավարությանը զուգահեռ, անցկացվեցին ռազմական հանցագործությունների դատավարություններ, որոնց արդյունքում պատժվեցին ոչ միայն պատերազմին մասնակից հանցագործ անհատներ, այլև լուծարվեց ճապոնական բանակը, իսկ նախկին զինվորականները դարձան անցանկալի անձինք նոր իշխանության և քաղաքական ղեկավարության շրջանում:

Տնտեսության աշխուժացման ծրագրի նախնական փուլում SCAP-ն իրականացրեց հողային բարեփոխումներ, որոնք հիմնականում ուղղված էին վարձակալ ֆերմերների գործունեության աշխուժացմանը և, ըստ էության, էականորեն նվազեցնում էին հարուստ հողատերերի ազդեցության լծակները տնտեսական և քաղաքական կյանքում: Հարուստ հողատերերի հիմնական մասը ռազմատենչ քաղաքականության ու նոր գաղութների ստեղծման կողմնակից էին, և հետևաբար՝ այդ փուլում պատժիչ գործողությունների թիրախում հայտնվեցին նաև նրանք:

Ժամանակի թելադրանքով, օբյեկտիվորեն առաջացավ նոր սահմանադրության մշակման ու ստեղծման խնդիր, որը հայտնվեց դաշնակից տերությունների սահմանադրագետների խորհրդատվական տիրույթում: Նոր սահմանադրության նախա-

[5] https://www.history.com/topics/world-war-ii/douglas-macarthur
[6] Supreme Commander of the Allied Powers (SCAP).

գիծը, որը նախատեսում էր բավական խորքային և էական փոփոխություններ երկրի քաղաքական ու տնտեսական կառավարման համակարգում, կարելի է ասել, թելադրվեց Ճապոնիայի գործող կայսրին ու երկրի ղեկավարությանը: Նախագծում կարևոր խորքային փոփոխություններից կարելի է առանձնացնել.

- կայսեր կարգավիճակի զգալի իջեցում, որն այլևս չէր ունենալու քաղաքական գործընթացները վերահսկելու միանձնյա հնարավորություն,
- հատկապես գյուղական համայնքներում կլանային աստիճանակարգերի էական թուլացում,
- խորհրդարանական համակարգի դերի բարձրացում և վերահսկման լծակների տրամադրում,
- կնոջ իրավունքների ու արտոնությունների ամրագրում,
- ազատ, մրցակցային շուկայի ձևավորման ու կայուն զարգացման նախադրյալների ստեղծում,
- ոչ պաշտպանական բնույթի զինված ուժերի լուծարում, ինչը ենթադրում էր յուրաքանչյուր իրավիճակում պատերազմի սկսումից հրաժարում:

Երկրորդ փուլի սկիզբը նախանշվեց Ճապոնիայի տնտեսական ճգնաժամով, որը SCAP-ի արևմտյան թևին՝ գեներալ Մաք Արթուրի ակտիվ օժանդակությամբ, ստիպեց վերայնայել օկուպացման քաղաքականությունը: Դրա պատճառներից մեկը SCAP-ի արևմտյան և կոմունիստական թևերը ներկայացնող տերությունների հակադիր պատկերացումներն էին երկրի տնտեսական զարգացման տեսլականի վերաբերյալ:

Նշենք, որ արևմտյան թևի համար ոչ միայն ընդունելի չէին Խորհրդային Միության և Չինաստանի տեսակետները, այլև վտանգավոր, քանի որ, ըստ վերլուծաբան մասնագետների, տնտեսության զարգացման խորհրդային մոդելի հետևից պարզորոշ երևում էին «կոմունիզմի ուրվականի ականջները»: «Տկար» տնտեսության և բազմաթիվ սոցիալական խնդիրների պարագայում նման մոտեցումը կարող էր ավելացնել ներքին համակիրների ոչ սակավ «բանակը»: Այսինքն՝ SCAP-ի արևմտյան թևը մտահոգված էր, որ նման սցենարի դեպքում, ինչպես նաև Չինաստանում կոմունիստների հաղթանակի արդյունքում տարածաշրջանում կավելանա կոմունիստական շարժման գործոնի ազդեցությունը՝ վտանգելով Արևելյան Ասիայի քաղաքական ապագայի վերաբերյալ իրենց տեսլականը:

Երկրում առաջացած ճգնաժամի հիմնական պատճառներից մեկն արդյունաբերության և սպառման շուկաներին անհրաժեշտ հումքի բացակայությունն էր, ինչի հետևանքով առաջանում էր պակասուրդ՝ ակտիվացնելով «սև շուկան» և հանգեցնելով անզուսպ ու անկառավարելի գնաճի: Եվ ինչպես Գերմանիայի պարագայում էր, արևմտամետների «փրկությունը» եկավ սկիզբ առած մեկ այլ պատերազմի տեսքով:

1950 թ.-ին[7] Կորեական պատերազմի բռնկումը SCAP-ին տվեց գործողությունների լայն ճակատ ու լիարժեք հնարավորություն՝ լուծելու Ճապոնիայի ճգնաժամի վրա այդ կարևոր տնտեսական բաղադրիչի ներազդեցության խնդիրը: ՄԱԿ-ի՝ Կորեական պատերազմի թատերաբեմ մտնելուց հետո[8] Ճապոնիան, SCAP-ի ակտիվ հովանավորչական միջամտության արդյունքում, դարձավ ՄԱԿ-ի հովանու ներքո գործող զինված ուժերի հիմնական մատակարարման հարթակ-պահեստը: Կորեական հակամարտությունը նաև հստակորեն «տեղավորվում» է ԱՄՆ-ի տարածաշրջանային հետաքրքրությունների շրջանակում, և հետևաբար՝ Ճապոնիան, գեներալ Մաք Արթուրի գործուն դերակատարման արդյունքում, դարձավ SCAP-ի արևմտամետ թևի լիիրավ գործընկերը, որով նաև կանխորոշվեց երկրի քաղաքական ու տնտեսական զարգացման ապագան:

Օկուպացման երրորդ փուլի ընթացքում, որը սկսվեց 1950 թ.-ին, արդեն իսկ տեսանելի էին տնտեսական և քաղաքական որոշակի կարգավորումների նախանշաններ, ուստի, SCAP-ի առաքելության հիմնական նպատակը հասնում էր իր տրա-

[7] https://militaryarms.ru/voennye-konflikty/korejskaya-vojna/
[8] https://history.state.gov/milestones/1945-1952/japan

մաբանական ավարտին՝ օկուպացման դադարեցման ու խաղաղության պայմանագրի կնքման տեսքով: Արդյունքում, 1951 թ. սեպտեմբերի 8-ին Սան Ֆրանցիսկոյի Խաղաղության համաժողովում Ճապոնիայի և 48 պետության միջև կնքվեց պատերազմական դրությունը և օկուպացումը դադարեցնելու մասին համաձայնագիր[9], որը, սակայն, չստորագրեցին մասնակից 3 պետություն՝ ԽՍՀՄ-ը, Լեհաստանը և Չեխոսլովակիան, քանի որ համաձայնագրի հիմնական դրույթները չէին համընկնում սոցիալիստական զարգացման ուղի բռնած այդ երկրների շահերին, իսկ ԽՍՀՄ-ի պարագայում առկա էր նաև տարածքային վիճելի խնդիր:

Դա էր պատճառը, որ Խորհրդային Միությունը, չնայած այն հանգամանքին, որ 1956 թ.-ին Ճապոնիայի հետ ստորագրել է պատերազմական իրավիճակին վերջ դնելու և դիվանագիտական հարաբերությունները վերականգնելու մասին համատեղ հռչակագիր, այդուհանդերձ, այդպես էլ չմիացավ վերոնշյալ համաձայնագրին՝ չկարգավորված տարածքային վեճի պատճառով[10]:

Հետպատերազմյան տնտեսական վերելքը կամ «ճապոնական հրաշքը»: Հետպատերազմյան Ճապոնիայի տնտեսական վերելքի կամ, ինչպես ընդունված է անվանել, «ճապոնական հրաշքի» նկատմամբ մոտեցումները տարբեր են: Ըստ տեսակետների և սկզբունքային հենքի՝ առանձնացվում են 4 հիմնական մոտեցումներ՝ ռոմանտիկական, իրատեսական, կոսմոպոլիտական (աշխարհաքաղաքացիական) և սինթետիկ[11]:

Առաջին մոտեցման դեպքում տնտեսության բարգավաճումը շաղկապվում է կոնֆուցիոսական էթիկայի և սամուրայի վարքագծի կանոնների (Բուսիդո) համատեղման խնդրին, որը, սակայն, չափազանց մակերեսային մեկնաբանում է, քանի որ, չնայած քրտնաջան աշխատանքի մասին քարոզին, այստեղ տնտեսական ու սոցիալական մարտահրավերները մեկնաբանվում են զուտ բարոյական տիրույթում, որն իր սկզբունքներով հակասության մեջ է նորարարական մտքի զարգացման հետ: Հարկ է նշել, որ հետպատերազմյան ժամանակաշրջանում, հատկապես՝ օրենսդրական բարեփոխումների համատեքստում, կոնֆուցիոսականության էթիկայի սկզբունքները լրջորեն վերափոխվեցին, ինչի արդյունքում բարոյական և վարքագծային որոշակի կանոններ նորարարական զարգացումների համար դարձան լիովին կիրառելի և հետևապես՝ օգտակար:

Իրատեսական և կոսմոպոլիտական մոտեցումների կողմնակիցները Ճապոնիայի տնտեսության զարգացումը դիտարկում էին բացառապես տնտեսական կառուցակարգերի դիտանկյունից, իսկ տեսակետների տարբերությունը նրանում էր, որ «իրատեսները» կենտրոնանում էին ներքին, իսկ «կոսմոպոլիտները»՝ արտաքին ազդող գործոնների համախմբերի վրա: Այսինքն՝ առաջինները համարում էին, որ հետպատերազմյան Ճապոնիայի տնտեսական հաջողություններն, իրենց էությամբ նույնանման էին եվրոպական երկրներում արձանագրված հաջողությունների հետ (Գերմանիա, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա), իսկ «կոսմոպոլիտները» շեշտում էին, որ Ճապոնիան, որպես համաշխարհային տնտեսական միասնական համակարգի մի մաս, հաջողել է համակարգային զարգացման ընդհանուր միտումների համատեքստում:

Սինթետիկ մոտեցման կողմնակիցները փորձում էին հնչած բոլոր տեսակետները համախմբել մեկ մոտեցման մեջ՝ ավանդական, մշակութային և տնտեսական գործոնները ներկայացնելով ընդհանուր ներկապնակում:

Վերելքի գործոնները: Հետպատերազմյան Ճապոնիայի տնտեսության վերելքին նպաստող գործոնները կարելի է խմբավորել ըստ գործընթացում դրանց մասնակցայնության աստիճանի և խորքայնության: Ընդ որում, դրանց կարևորությունը կամ գերակայությունը, ըստ ժամանակահատվածի, կարող է լինել տարբեր,

[9] Партитура Второй мировой. Гроза на Востоке, авт.-сост. А. А. Кошкин. М. : Вече, 2010.
[10] https://www.bbc.com/russian/features
[11] https://russiancouncil.ru/blogs/slebedev/yaponskoe-ekonomicheskoe-chudo-v-retrospektive/

սակայն կան գործոններ, որոնք դիտարկվում են ռազմավարական տեսանկյունից և իրենց բնույթով հայեցակարգային են:

Մասնավորապես՝ կարևորագույն գործոններից մեկը երկրի ապառազմականացումն է: Նախապատերազմյան Ճապոնիան հսկայական գումարներ էր ծախսում ռազմական ոլորտը պահպանելու ու զարգացնելու համար, ուստի, բանակի լուծարումն ու ծախսերի աննախադեպ կրճատումը երկրին հնարավորություն ընձեռեցին հայացքն ուղղելու դեպի արդյունաբերության և գյուղատնտեսության ոլորտներում գոյություն ունեցող բազում հիմնախնդիրների լուծումը՝ հիմնվելով նոր տեխնոլոգիաների ձեռքբերման վրա: Նման քաղաքականության մասին է վկայում այն փաստը, որ 1950-1970 թթ.-ին Ճապոնիան ձեռք բերեց մոտ 15 հազար արտոնագիր և թույլատրագիր[12] (հիմնականում՝ ամերիկյան): Այսինքն՝ բավական թանկարժեք ներդրումների և նոր գիտական մշակումների փոխարեն, ոլորտների զարգացման առումով, հիմնական սկզբունք դարձավ նոր տեխնոլոգիաների գնումն ու դրանց տեղայնացումը տնտեսության հիմնական ճյուղերում: Այս սկզբունքի կիրառման լավագույն օրինակներից մեկը նեյլոնի արտադրության արտոնագրային իրավունքի ձեռքբերման գործարքն էր ամերիկյան քիմիական հսկա «DuPont» և ճապոնական «Toyo Rayon Co» (ներկայիս «Toray Industries») ընկերությունների միջև[13]: Ամերիկյան ընկերությունը նեյլոնի արտադրության տեխնոլոգիայի ստեղծման վրա ծախսել էր ավելի քան մեկ տասնամյակ և 25 միլիոն ԱՄՆ դոլար, իսկ ճապոնական ընկերությունը 1950-ականների սկզբին նեյլոնի արտադրության արտոնագիրը գնեց 7.5 միլիոն ԱՄՆ դոլարով, ընդ որում, տարաժամկետ վճարման սկզբունքով (1951-1959 թթ.): Նշված տարիներին միայն նեյլոնի արտահանումից ստացված եկամուտը Ճապոնիայում կազմեց մոտ 90 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը գրագետ և եկամտաբեր գործարքի վկայություն էր: Նմանօրինակ գործարքներն էլ հիմք դրեցին պատերազմից քայքայված, սակավ ռեսուրսներով երկրի տնտեսական վերելքին և արագացված տեխնոլոգիական հեղափոխությանը:

Տնտեսական այսպիսի քաղաքականության իրականացումը հնարավոր դարձավ օրենսդրական էական բարեփոխումների արդյունքում: Մասնավորապես՝ օրենսդրորեն հանվեց գյուղացիական ընտանիքում ամրագրված կլանային օրինական իշխանության սկզբունքը, ինչը հնարավորություն ընձեռեց ընտանիքի ավագ որդիներին աշխատանքի անցնելու քաղաքում, ձեռք բերելու մասնագիտություն: Այս հիմնարար փոփոխությունը, որն ավելի շատ ավանդույթային և բարոյական վարքագծի վերաիմաստավորման տիրույթում էր, հնարավորություն տվեց արդյունաբերական քաղաքների աշխատատար ոլորտներում լուծելու աշխատուժի խնդիրը: Հենց այդ նկատառումով էլ ազգայնացվեցին զբաղվածության գործակալությունները, որոնք նախկինում վերահսկվում էին տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Այս փոփոխությունը թույլ տվեց ընդհանուր հետաքրքրությունների շրջանակում միմյանց շաղկապել ուսումնական հաստատություններն ու աշխատանքային բորսաները՝ էականորեն կրճատելով աշխատաշուկայի վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման ու մշակման անհարկի ծախսերը:

Միաժամանակ, երկրի սահմանադրության փոփոխությամբ, էականորեն փոփոխվեցին քաղաքական և գործարար վերնախավի դերերը: Մասնավորապես՝ կայսրը հրաժարվեց իր աստվածային ծագման շնորհից, թույլատրվեց արհմիությունների և ընդդիմադիր կուսակցությունների գործունեությունը, ձևավորվեց տնտեսության մրցակցային դաշտ, որը նաև հստակեցրեց իշխանությունների և գործարարության փոխգործակցության «խաղի կանոնները», ինչն էլ, իր հերթին, հնարավորություն տվեց պաշտոնյաներին և ձեռներեցներին համատեղ ուժերով մշակելու զարգացման ընդհանուր ռազմավարություն, որոշելու տնտեսության գերակա ոլորտները:

[12] https://russiancouncil.ru/blogs/lebedev/yaponskoe-ekonomicheskoe-chudo
[13] https://mgimo.ru/files/118510/kb.08_japan

Տնտեսական վերելքի կարևոր գործոններից էր նաև հարկերի նվազեցման քաղաքականությունը, որի իրականացումը նույնպես պայմանավորված էր ռազմական ծախսերի կրճատմամբ: Տնտեսական քաղաքականության առաջնային գերակայություն դարձավ արտահանման խթանումը, ինչը կարևոր դեր խաղաց Ճապոնիայի տնտեսական առաջընթացի ապահովման տեսանկյունից: Մինչպատերազմյան Ճապոնիայի արտադրանքն արտաքին աշխարհում նույնացվում էր էժանության և ցածր որակի հետ: 1950-ականների վերջից սկսած՝ իրավիճակն ամբողջովին փոխվեց: 1957-1973 թթ.-ին արտահանումն աճեց գրեթե տասն անգամ[14]: Երկիրն արտահանում էր բարձրորակ և համաշխարհային մրցակցային շուկայի պահանջները բավարարող ավտոմեքենաներ, նավեր, օպտիկական սարքեր, էլեկտրական կենցաղային սարքավորումներ, կիսահաղորդիչներ, ռադիոներ, տեսախցիկներ, հեռուստացույցներ և լայն սպառման այլ ապրանքներ:

Հաջորդ կարևոր գործոնը ձայբացուների՝ ֆինանսական և արդյունաբերական կոնգլոմերատների լուծարումն էր[15]: Սրանք այն խոշոր մենաշնորհ խմբերն էին, որոնք ձևավորվել էին XIX դարի կեսերին և, ըստ էության, վերահսկում էին Ճապոնիայի տնտեսությունը: Մասնավորապես՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին հինգ հսկաներ՝ «Mitsui»-ն, «Mitsubishi»-ն, «Yasuda»-ն, «Sumitomo»-ն և կայսերական ընտանիքը վերահսկում էին Ճապոնիայի ֆինանսական կապիտալի գրեթե 4/5-րդ մասը և երկրի ընդհանուր ազգային հարստության մոտավորապես կեսը[16]: Խորքային բարեփոխման արդյունքում լուծարվեցին 18 խոշոր ձայբացուներ, և տեղի ունեցավ արդյունաբերողների, ռեսուրսների մատակարարների, բանկերի միավորում առավել ճկուն և գործունակ խմբերում, որոնք կոչվեցին կեյրեցու[17]: Ըստ տնտեսագետ Յուտակա Կոսաիի[18]՝ «ձայբացուների լուծարումն այն լրջագույն լծակն էր, որը նպաստեց մրցակցային արդյունաբերության ստեղծմանը»: Ընդ որում, ձևավորված գործարար խմբերի նպատակը ոչ միայն շահույթ ստանալն էր, այլև իրենց դիրքի ու դերի ամրապնդումը, ինչպես նաև ներքին և արտաքին շուկաներում մրցակցային հնարավորությունների ընդլայնումը:

Տնտեսության վերելքն ապահովող հաջորդ կարևոր գործոնն արտադրության ավտոմատացման նպատակային գործընթացն էր, որը, ի դեպ, անխուսափելի էր դարձնում աշխատատեղերի կրճատման խնդրի առաջացումն ու դրանից բխող տրամաբանական դիմադրությունը: Ուստի, աշխատողների աջակցությունը ստանալու նպատակով օրենսդրությամբ նրանց առաջարկվեցին ցմահ զբաղվածության, ինչպես նաև աշխատավարձի ու ծառայության ժամկետների փոխշաղկապվածության պայմաններ: Այս նորամուծությունը հանգեցրեց նրան, որ ավտոմատացման գործընթացը լուրջ դիմադրության չարժանացավ աշխատակիցների և նրանց շահերը պաշտպանող արհմիությունների կողմից, որի արդյունքում կարճ ժամանականց ճապոնական տնտեսությունը դարձավ աշխարհում ամենաավտոմատացվածներից մեկը: Գծապատկեր 1-ում արտացոլված է «ոսկե վաթսունականների» տնտեսական աճի միջին ցուցանիշների համեմատականը՝ տասնամյակի կտրվածքով, որտեղ Ճապոնիան առնվազն երկու անգամ գերազանցում է աշխարհի խոշոր տերություններին:

Ճապոնիայի հետագա պատմությունը հագեցած է տնտեսական տարբեր ճգնաժամերով և վերելքներով, որոնց պատճառները մասնագետները շատ հաճախ փընտրում են հենց նույն բարեփոխումների ժամանակահատվածի իրողություններում: Սակայն միակ ճշմարտությունն այն է, որ

[14] https://history.state.gov/milestones/1945-1952/japan
[15] https://flot.com/publications/books/shelf/avarin/85.htm
[16] https://ru.wikipedia.org/wiki/%D0%94%D0%B7%D0%B0%D0%B9%D0%B1%D0%B0%D1%86%D1%83#:~:text=%E6%A0%AA%E5%BC%8F%83
[17] https://hy.wikipedia.org/wiki/%D5%83%D5%A1%D5%BA%D5%B8%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%BF%D5%B6%D5%BF%D5%A5%D5%84
[18] Yutaka Kosai. The postwar Japanese economy, 1945-1973 / Kozo Yamamura (ed.) The Economic Emergence of Modern Japan. – Cambridge: Cambridge University Press, I997.



ԳԾԱՊԱՏԿԵՐ 1

1960-1973 թթ. տնտեսական աճի միջին տարեկան ցուցանիշը (%)[19]

աղետալի պատերազմից ու ատոմային աղետից հետո երկիրը զրոյական կետից սկսեց կերտել իր ապագան. նախ՝ ի զորու եղավ ընտրելու հիմնական գործընկերոջը ու նախանշելու երկարաժամկետ զարգացման ուրույն ուղին, ապա կարողացավ վերանայել և վերաիմաստավորել ոչ միայն իրավական ու տնտեսական հիմնարար սկզբունքները, այլև ճապոնացի ժողովրդի հոգևոր-ավանդական, դարերով կերտված վարքագծային նորմերը, որոնք այդ ժամանակ արդեն, կարծես թե, ենթագիտակցական մակարդակում էին: Թվում է՝ մի քանի տասնամյակում հնարավոր չէ վերածևել իրերի՝ ասես քարացած դրվածքը, բայց ճապոնացիների աշխատասիրությունն ու հավատը, կարգապահությունն ու խելամտությունը, առաջնայինի ու երկրորդականի տարանջատման, կեղծ ու շիտակ հայրենասիրության տարբերակման ունակությունը և, ի վերջո, գերագույն գաղափարի և հստակ օրակարգի շուրջ ազգովի համախմբման ընդունակությունը հնարավորություն ընձեռեցին նրանց ոչ միայն ոտքի կանգնելու, այլև դառնալու XX դարի երկրորդ կեսի՝ աշխարհում գրանցված տնտեսական հաջողված պատմությունների հիմնական կերտողն ու մարդկության պատմության առաջընթացի լիիրավ խորհրդանիշը:

[19] Японский парадокс (Реальности и противоречия капиталистического управления), Б. З. Мильнер, И. С. Олейник, С. А. Рогинко, М., Мысль, 1985.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Япония. Региональная структура экономики, под ред. В.Я.Выборнова. М., Наука, 1987.
2. Страны мира: Краткий полит.-экон. справочник, М., Политиздат, 1989.
3. Японский парадокс (Реальности и противоречия капиталистического управления), Б.З. Мильнер, И.С. Олейник, С.А. Рогинко. М., Мысль, 1985.
4. Партитура Второй мировой. Гроза на Востоке, авт.-сост. А. А. Кошкин. М., Вече, 2010.
5. Yutaka Kosai. The postwar Japanese economy, 1945-1973 / Kozo Yamamura (ed.) The Economic Emergence of Modern Japan. – Cambridge: Cambridge University Press, 1997.
6. https://www.history.com/topics/world-war-ii/douglas-macarthur
7. https://militaryarms.ru/voennye-konflikty/korejskaya-vojna/
8. https://www.bbc.com/russian/features
9. https://russiancouncil.ru/blogs/lebedev/yaponskoe-ekonomicheskoe-chudo
10. https://mgimo.ru/files/118510/kb.08_japan
11. https://history.state.gov/milestones/1945-1952/japan
12. https://flot.com/publications/books/shelf/avarin/85.htm

13. https://ru.wikipedia.org/wiki/%D0%94%D0%B7%D0%B0%D0%B9%D0%B1%D0%B0%D1%86%D1%83#:~:text=%E6%A0%AA%E5%BC%8F%83
14. https://hy.wikipedia.org/wiki/%D5%8A%D5%B8%D6%80%D5%BF%D5%A1%D5%AC:%D5%83%D5%A1%D5%BA%D5%B8%D5%B6%D5%AB%D5%A1
15. https://hy.wikipedia.org/wiki/%D5%83%D5%A1%D5%BA%D5%B8%D5%B6%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6_%D5%BF%D5%B6%D5%BF%D5%A5%D5%84

Амазасп ГАЛСТЯН
Исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук

ГЕОПОЛИТИЧЕСКАЯ ХРОНИКА

ЯПОНСКАЯ МОЗАИКА: ВОЙНА, АТОМНАЯ КАТАСТРОФА, КАПИТУЛЯЦИЯ, ОККУПАЦИЯ,ЭКОНОМИЧЕСКИЙ РОСТ

Вторая мировая война «предоставила» Японии, как союзнику нацистской Германии и побежденной стране, полный «пакет» последствий, к которому добавилась еще и ядерная катастрофа. Окончательный крах казался неминуемым, однако Япония не только вышла из безвыходной ситуации, но всего несколько десятилетий спустя, стала одной из ведущих и развитых стран мира, и в ряде областей мировой экономики, в частности, во внедрении и применении инновационных технологий, теперь диктует повестку дня, устанавливая невероятно высокую планку развития. В статье, в ретроспективном анализе, представлен путь экономического развития страны, начатый после войны и ядерной катастрофы. Она смогла выбрать своего основного партнера и в контексте этого выбора обозначила уникальный путь долгосрочного развития. Для достижения цели Япония пересмотрела и переосмыслила не только основные правовые и экономические принципы, но и многовековые традиции и национальные нормы поведения, которые находились на подсознательном уровне японцев, и казалось, что эти окаменелые принципы невозможно изменить в течение нескольких десятилетий. Но Япония нарушила все стереотипы и стала главным творцом экономического успеха в мире во второй половине XX века и полноправным символом прогресса в истории человечества.

Ключевые слова: *Япония, Вторая мировая война, ядерная катастрофа, «SCAP», «дзайбацу», «кэйрэцу», автоматизация, экономическое чудо, факторы роста*

Hamazasp GALSTYAN
Researcher at "Amberd" Research Center, ASUE, PhD in Economics

GGEOPOLITICAL CHRONICLE

JAPANESE MOSAIC: WAR, NUCLEAR DISASTER, CAPITULATION, OCCUPATION AND ECONOMIC GROWTH

World War II delivered a complete package of disasters to Japan, as a fellow ally of Nazi Germany, the package was also added by the nuclear disaster. The final destruction seemed inevitable, but not only did Japan emerge from the seemingly hopeless situation, but only a few decades later it became one of the world's leading and developed countries, and now Japan dictates the world economy in a number of areas, particularly the introduction and application of innovative technologies. After all the disasters Japan could set an incredibly high benchmark for development.

The paper presents a retrospective analysis of a country's path started from the zero point of economic development after the catastrophic war and the nuclear disaster. In this way, Japan was first able to choose its main partner and in the context of that choice set a unique path for long-term development. In this way, the country was able to reconsider not only its basic legal and economic principles, but also the centuries-old national norms of the Japanese people, which already seemed to be on a subconscious level, and even decades would not be able to change the established approaches. As a result, Japan became one of the main creators of economic successful stories in the world in the second half of the XX century and one of the full-fledged symbols of the progress of human history.

Key words: *Japan, World War II, nuclear disaster, "SCAP", "zaybatsu", "keyretsu", automation, economic miracle, factors of growth*